

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ

Ի Ժ Դ Թ Ի Ի

Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի Ո Յ

Ա Ն Դ Բ Ա Կ Ա Բ Չ

ՀԻՒՄՆԱՓՈՅԼ ՕՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅ ՏԱՐՈՒ 1 ԱՄՍՏԵՏՐԱԿՈՒՄ ՏՊԱԳՐԱԾ ԱՐՁԱԳԱՆԳԻՆ.

Կարդացինք Հիւսիսափայլ օրագրի մէջ Աշտարխանի մին քանի իւրեանց հայ անուանող բնակիչների արձագանգը: Հաւաքուել են մին քանի բողոքականներ, Աշտարխանի Հայոց պատուելի եւ բազմամարդ Լուսաւորչական հասարակութիւնից մտքով ու սրտով բաժանուած, ճիշ են բարձել ճշմարտութեան ընդդէմ, եւ կամեցել են ազադակով վճռել այն մեծ ազգային կրօնական խնդիրը, որ երկար ժամանակ լինելով հայազգի ուսումնականների զգուշաւոր քննութեան առարկայ, վճռահատուեցաւ վերջապէս էջմիածնական Սրբազան Սինոդի եւ ամենայն Հայոցս վեհափառ Կաթողիկոսի օրինաւոր վերազննութեամբ: Հայրապետական եւ Սինոդական վճռահատութիւնից յետ, հայրապետամերժ պարօնները, Սաղայի եւ Թիւթիւնցի Սերոբեանցի ձայնակիցները, նստել են ինքնակոչ դատաւոր Հայոց ազգի Եկեղեցու վերայ, եւ պաշտպան իւրեանց լուտերահայ խոյեցի վարդապետին, որ բոլոր Հայոց ազգին, եւ հետեւաբար այդ պարօններին (որովհետեւ դոքա եւս կոչոււմ են իւրեանց ազգի մասն) այլ եւ այլ ժամանակ կոչել էր՝ *sgks, անուամբն, անկիրք բազմութիւն* եւ *անգրագէտ անբոխ*. ուրեմն յօժարակամ ընդունել են այդ գեղեցիկ ածականները իւրեանց վերայ՝ իբրեւ քաջայարմար իւրեանց սեփական յատկութիւններին: Բայց մին զարմանալի բան. ընդունելով նազարեանցի *բոյր* գրուածները եւ հետեւաբար նորա ասածը, «Ի՞նչ է հասարակաց ձայնը, անկիրք բազմութեան կարծիքը, անգրագէտ ամբոխի խօսքը,» չեն մտածել պարօնները, Թէ նոցա ձայնը, նազարեանցի իսկ ասելով, իբրեւ անկիրք մարդկանց կարծիք, իբրեւ անգրագէտ ամբոխի խօսք, ոչինչ է եւ այս րոպէիս. եւ մեզ տամէ իրաւունք ասելու Թէ նոցա դատաստանը եղել է այնպէս, որպէս ասոււմէ նազարեանցը, այսինքն տգիտաբար, անուսումնաբար, անկիրք բազմութեան եւ անգրագէտ ամբոխի նման: Վասն զի այդ պարօնները առանց որոճալու իւրեանց խելապատակի մէջ այլ եւ այլ ժամանակ այլ եւ այլ ուսումնականներից՝ Թէ առանձին գրքերի եւ Թէ օրագրների մէջ տպագրած քննութիւնները ընդդէմ նազարեանցի հաւատակործան զրաբա-

նութեանց, առանց մի առ մի հերքելու մեր հրապարակական նամակումը առաջարկած (1) պարտաւորութեան 19 հատուածները (*обязательные пункты*), չնայելով որ մեր քննութիւնները ընդունուած եւ հաստատուած են էջմիածնական Սայրագոյն Հոգեւոր Կառավարութիւնից, ոչինչ պատասխան չտալով մեր բազմամիւ նկատողութիւններին, այլ բոլորովին պապանձուած գլխաւոր նիւթի եւ ցուցմանց առաջեւ, որպէս եւ ինքը նազարեանցը, որ միայն խաժամուժ ամբոխի աղաղակը շինել է իւր համար պաշտպան, — այդ կամաւ կուրացած դատաւորները անպայմանաբար ընդունոււմ են նազարեանցի հաւատաստան մշտքերը, եւ անպայմանաբար հերքոււմ են մեր գրուածները (որոց նպատակը եղել է մեր ազգային դաւանութեան պաշտպանութիւնը) եւ հետեւաբար մերժոււմ են Կաթողիկոսի եւ Սրբազան Սինոդի վճիռը:

Պէտք է ասենք այդ պարօններին Թէ դատաւորի գլխաւոր եւ իսկական պաշտօնը պահանջոււմէ անհրաժեշտաբար՝ երկու հակահարկող մի տասճը կամ գրածը նախ եւ առաջ մանրամասնաբար եւ զգուշութեամբ քննել, եւ ապա արտասանել ո՞ր եւ իցէ դատաստան. վճիռից առաջ, կամ գո՞նեա վճռի հետ միասին ցոյց տալ Թէ ո՞ր բաւական պատճառի սկզբան վերայ հիմնուած (*principium rationis sufficientis* 2) յանցաւոր է նանաչում մինին եւ արդարացնումէ միւսին: Այդ բնականապէս տուած է ամեն բանական կենդանիների: Աշտարխանի գաւառում բնակուած են շատ Դալմուլներ. գո՞նեա այդ պարօնները հարցանէին նոցանից, եթէ ինքեանք չգիտէին, Թէ ո՞րպէս պէտք է դատաստան առնել երկու հակահարկողի մէջ, որ եւ իցէ գործում, Թէպէտ եւ վէճը լինէր Թիւթիւնցի վերայ եւ Թիւթիւնցի Սերոբեանցի՝ հետ: Դալմուլները եւս կասէին դոցա, Թէ ամենայն տեղ աշխարհի ե-

(1) Տես անցած տարու Մասեաց Աղանուոյ 21 եւ 22 համարներում՝ մեր անպատասխան մնացած հրապարակական նամակը առ պատուական ազգն Հայոց:

(2) Начало довольной причины. Տես Լօզիկայում մարդկային մտածութեան հիմնական օրենքները:

րեսուլտ, ամենայն միմեանցից հարիւրակերպ եւ հազարակերպ զանազանուած վէճերում, դատաստանի ընդհանուր եւ անփոփոխ կանոնն է՝ նախ գործը քննել եւ ապա վճռել. եթէ ոչ, բանական մարդու դատաստանը կնամանի Կրիլովի էջի վճռահատութեանը, թէ «Աքաղաղը առաւել քաղցր է երգում քան թէ սոխակը»: Պարոնները ինքեանք չեն իմացել թէ ի՛նչպէս է լինում դատաստան ասած բանը բանական կենդանիների մէջ. Զալմուղներին եւս չեն կամեցել հարցանել, եւ միայն նազարա-նալբանդա-Սադայական ձեռով վճռաբան են եղել, սյսիինքն չեն պատասխանել ոչ ինչ մեր ցուցմանը, որ կարողանայինք տեսանել նոցա հասկացողութեան եւ Յշմարտասիրութեան չափը, եւ գուցէ հաւատալ՝ թէ նազարեանցի գերուածները եւ նոցա ընդունածը հակառակ չեն մեր Լուսաւորչական եկեղեցու դաւանութեանը: Այդպիսի անքննող, անպատասխան դատաստանից յետ՝ համարձակուած են յաւելցնել պարոնները թէ՛ Մեք եւս կհաւանաձայնեիմք լոցա հետ, երե մեր ձեռը դնեիմք մեր սրտի վերայ եւ մտածուեմք, բայց չեմ կարողանում համաձայնիլ Կրիլովի էջի վճռահատութեան հետ, թէ սոխակի քաղցրանուագ դայլայիկը վատթարագոյն է, քան թէ խորոզի անճոռնի աղաղակը:

Աշտարխանի մէջ տասն եւ եօթմ մարդ (1) վեր են առնում գրիչ եւ ստորագրում են. — Ի՞նչ, թէ ընդունում են նազարեանցի բոլոր գրուածները եւ հերքում են Չերքէզեանցին: — Ի՞նչ էին գրել նազարեանցն ու Չերքէզեանցը: նազարեանցը իւր գրուածներով տարածել էր լուտերական աղանդը Հայոց մէջ, աղանդի անունը լուսաւորութիւն դնելով եւ ասելով թէ Աւետարան է քարոզում. ամենայն տեղ լուտերականների միւս անունը գործածելով, որ է՝ Աւեսարսևակս (2), որ այդպէս Աւետարանի եւ լուսաւորութեան անունով կարողանայ սպրդել ազգի մէջ լուտերական աղանդը: Չերքէզեանցը ցոյց էր տուել այդ խարդախութիւնը փաստերով եւ պաշտպանել էր Հայկազեան եկեղեցու դաւանութիւնը: Ուրեմն այդ 17 մարդը ընդունում են ո՛չ թէ նազարեանցին, այլ նորա քարոզած պրոտեստանտութիւնը. եւ հերքում են ո՛չ թէ Չերքէզեանցին, այլ նորա պաշտպանած Լուսաւորչական կրօնը: — Միծաղելի եւ համանգամայն արտասուելի՛ տեսարան. — *сѣхъ и rope*, ինչպէս ասում են Ռուսերը:

Պարոնները ընդունում են նազարեանցի բոլոր գրուածները, եւ յետոյ յաւելցնում են, թէ նազարեանցին գովասանում էր բոլոր գիւնակսն, եւ եւս *osur ազգեր*: Այդ տեղ ո՞ր համբերող սիրտը կարող էր զսպել իւր ծիծաղը. խոստովանում ենք եւ մեր Թուրքութիւնը այդ դիպուածում, ծափահարութեամբ ծիծաղեցինք եւ դարձեալ ծիծաղեցինք: Պարոնները գովասանութեամբ ընդունելով նազարեանցի ամենայն գրուածները, պէտք է շատ հաւանած լինին ուրեմն եւ նազարեանցի Թարգմանութեան 248 սխալները ընդդէմ Հայոց գրաբար լեզուի, որ մեք ցոյց ենք տուած Մեղու

(1) Այդ 17 մարդը բոլորը Աշտարխանցի չեն. նոցա մէջ կան ոմանք եկաոր Զգարցի կամ Նախիջեւանցի:
 (2) Յայտնի է րէ լուտերականները կոչում են իւրեանց յատկապէս *աւեսարսևակսն* քրիստոնեայ, որպէս եւ իւրեանց եկեղեցին *Evangelische Kirche*.

Հայաստանի լրագրումը (1). եւ այսօր այդ պարոնները դուրս են եկել հրապարակ ասելու, թէ նոքա ընդունում են սխալակերպ եւ հերքում են ուղիղը եւ կսնունաւորը. այդ իմաստուն խօսքը ասելու համար չա՛ժէր, որ մարդ իւր մեռած տեղից վեր կենար (2): Միծաղեցինք դարձեալ որ այդ պարոնները յօժարակամ ընդունելով սխալական եւ անկանոն լեզուագիտութիւնը, չգիտենք ո՞ր գիտնականի բերանով եւ ո՞ր օտար ազգի վկայութեամբ գովելի են քարոզում ո՞ր եւ իցէ մարդու տկարութիւնը լեզուի մէջ: Միծաղեցինք կրկին, երբ տեսանք թէ ինքը՝ նազարեանցը լուծած եւ պապանձուած մեր նկատողութիւնների առաջեւ, այդ չորրորդ անգամն է որ իւր ասած *անկիրք բազմաբան* եւ *անգրագիտ անբարի* անընտրող եւ անհասկացող գովեստը (գուցէ իւր սեփական գրածը եւ նոցա բարեկամաբար ստորագրածը) համարում է բաւական պաշտպանութիւն իւր ակարութեանը, վասն որոյ եւ անդադար տպագրում է այդպիսի ներբողական ճառեր, բանաստեղծական մտացածին դրուատներ իւր սեփական օրագրում՝ իւր անձին դարձուցած, խոցուած սրտի ըզլեցական միջնարկութեան համար, չհասկանալով ամենեւին թէ անպապացոյց մերկանդամ գովեստներ անգրագէտ ամբոխից ստացած՝ շատ առաւել մեծ պախարակութիւն է նորա համար գիտնականների դատաստանի առաջեւ, քան թէ ապացուցած քննութիւնները: Այդպիսի դատարկախօս ներբողեան լսել էինք վաղուց Սադայի բերանից. Սադայի բերանը համբուրեց յետոյ Թիւթիւնի Սերոբեանցը նոյն եւ նման ներբողական ճառով, Թիւթիւնի Սերոբեանցի բերանը համբուրում են այժմ Աշտարխանից 17 մարդ՝ միօրինակ, միաձեւ, անպապացոյց, տարփողական խօսքերով. ասես թէ այդ դրուատների շարադրողը մի եւ նոյն մարդն է եղել. ամենի մէջ մի եւ նոյն միտք, մի եւ նոյն զգացմունք, մի եւ նոյն խօսք. ամենը՝ կրկնութիւն կրկնութեանց, գովեստ գովեստից: Սակայն չկարծէք, պատուելի ընթերցողներ, թէ այդ դրուատների յօրինողը նազարեանցն է ինքը, քա՛ւ լիցի. ո՛չ այն պարոնները կցանկանային տալ, եւ ո՛չ նազարեանցը առնուլ այդպիսի գովեստներ:

Թո՛ղ համբուրեն միմեանց բերանը. Թո՛ղ տարփողեն ինչքան կամին. բայց եւ անտես չառնեն պատասխան տալ մեզ թէ ի՞նչ պատճառով են ընդունում սխալականը, անկանոնը, եւ ի՞նչ հիման վրայ են հերքում սխալների, պակասութիւնների ցուցմունքը. կամ թէ ի՞նչ ապացոյց ունին մեր Թշնամութեանը դէպ ի նազարեանցը եւ իւրեանց՝ անկողմնապահութեանը այդ դիպուածում: Մեր գրուածները եղել են փաստերով. նոցա արձագանգը առանց որ եւ իցէ փաստի, եւ միայն սովորական գովաբանութիւն նազարեանցին, խուճկ եւ կնդրուկ նորա քմին: Պարոնների անպայմանաբար ընդունելը՝ ինչ որ գրել է նազարեանցը, եւ անպայմանաբար հերքելը՝ ինչ որ գրել ենք մեք, բացայայտ ցոյց է տամ նոցա կուսակցական հոգին, որ ծնանում է իւրեանց համախոհութիւնից նազարեանցի հետ՝ կրօնական ա-

(1) Տե՛ս 1860 քուսկանի 31, 32, 33, 34, 35, 36, եւ 37 համարները:
 (2) Hamlet.

նարկաներում. Եւ այդ հանգամանքը բնականապէս պէտք էր յարուցանէր նոցա սրտումը սաստիկ ատելութիւն դէպ իմեզ: Պատասխան, պատասխան, պարոններ, եւ ո՛չ թէ կողմնակի խօսք ու զրոյց, եւ ո՛չ թէ ասիական բանասրկութիւն եւ դատարկաբանութիւն: Եթէ դուք չէ՛ք կարող պատասխանել, խնդրեցէ՛ք նազարեանցին. ի՞նչպէս է կարելի որ ուսումնագող վարդապետը, որին՝ ձեր ասելով՝ գովում են գիտնականները եւ օտար ազգերը, չկարողանայ հերքել մի առ մի մեր ցուցմունքը:

Պարոնները ասում են թէ ընդունում են նազարեանցի բողոք գրուածները, ուրեմն եւ մեր 19 հատուածով ցոյց տուած նազարեանցի հակահառութիւնները մեր հայկազեան եկեղեցու դաւանութեանը եւ նորա անձաճուղի հակամիտութիւնը դէպ իրութեան կանխողներն. վասն զի այդ էինք ապացուցել մեք փաստերով, որը որ դուք չեն հերքել, եւ այսօր դուք են եկել հանդէս ասելու միայն թէ ընդունում են լուստերականների մեկնութիւնները եւ հերքում են մեր Հայոց եկեղեցու ընդունածը. այդ ամենայն ընդունում են անպայմանաբար եւ ստորագրում են, չմտածելով ամենեւին՝ թէ այդպիսի ստորագրութեամբ օգնում են մեզ՝ ո՛չ միայն հասկանալի, այլեւ տեսանելի եւ շօշափելի առնել այն ճշմարտութիւնը, որը որ մեք բազմաթիւ յօդուածների տպագրութեամբ հետեւում էինք ապացուցանել մինչեւ այսօր, թէ նազարեանցի գրուածները պրոտեստանտների պրոպագանդի (տարածման) հետեւանքն են, եւ բաւական յառաջադիմութիւն են արարել մեր հայ ժողովրդի սրտումը: Ստորագրութիւնը մին փայլուն ձեւով հաստատեց մեր խօսքերի ճշմարտութիւնը, մին շօշափելի ապացուցով իրաւացրեց եւ այն զգուշութիւնը որ միշտ առաջարկում էինք մեր պատուական ազգին պրոտեստանտների կողմից: Ստորագրութիւնը ակներեւ ճշմարտացրեց ձուքադի մէջ (1) մեր ասած խօսքերը՝ թէ «երկու տարի առաջ եկած էր Աշտարխան մին Պարսիկ կամ պարսկազգեստ ծրպանեալ պրոտեստանտ, եւ սկսել էր առնել իւր նուիրակութիւնը քաղաքի Պարսիկ ժողովրդի մէջ, որոց հետ միասին ունեցել էր շտողներ եւ մեր Հայոց ազգից մին քանի նազարեանցի նման քննող ու զրկող բոխաններ»: Այդ խօսքը մեք ասել էինք մին տարի առաջ, երբ չգիտէինք մի ըստ միօջէ այն Աշտարխանցիների անունները, որ այսօր տպագրութեամբ դուքս եկան հրապարակ՝ մեզ ճշմարտացնելու համար: Այժմ այս պէտք է յաւելցնենք այս տեղ՝ թէ ստորագրող պարոններից ոմանք, որպէս յայտնի է Աշտարխանի բնակիչներից, մինչեւ այսօր առանձին ջերմեռանդութեամբ ճանապարհորդութեան կարգա, իբրեւ մին ուխտագնացութեան տեղի, ուր բնակուում է այն պարսիկ պրոտեստանտը, այն օրից՝ երբ արտաքուցեցաւ նա Աշտարխանից քաղաքական պօլիցիայի կարգադրութեամբ:

Աշտարխան քաղաքը, 1820 թուականներից սկսած, ուրիշ հայաբնակ քաղաքներից շատ առաւել ենթարկուեցաւ պրոտեստանտների շքրջմովի քարոզութիւններին: Այդ ժամանակներում երեւեցան այն տեղ մին քանի անգղիացի միսսիո-

նարներ, որ այդ նպատակով սովորեցին հայերէն, եւ յետոյ մեր աշխարհաբառ լեզուով տպագրեցին Աւետարանը եւ ձրի տարածեցին հայ հասարակութեան մէջ: 1826 թուականում նոցա ցանած սերմերից յառաջ եկան նշանաւոր պատուներ. մինչեւ իննսուն տուն հայ, իւրեանց մայրենի եկեղեցուց սարտուցած, սկսել էին յայտնի ընդդիմահառել մեր ազգային դաւանութեանը եւ եկեղեցական արարողութիւններին, մինչեւ որ ժամանակի Արքեպիսկոպոսը Յովհաննէս, տեսանելով վտանգի մեծութիւնը մեր եկեղեցու համար, հոգ տարաւ. երբ բազմադիմի խրատը եւ համոզմունքը չներգործեցին, առանձին արքունի հրովարտակի զօրութեամբ, նոցա մէջ գլխաւոր եւ առաւել յամառուած գերդաստանը՝ Մաղաքեանց արքայը Ղազան գաւառի մին թաւարաբնակ աւան (1): 1858 կամ 59 թուականներում յայտնուեցաւ Աշտարխանում այն պարսիկ պրոտեստանտ քարոզիչը, որին յիշատակեցինք վերեւումը: 1853 թուականից սկսած (2) մինչեւ այսօր տարածուում են նազարեանցի լուստերախոյ տպագրութիւնները, թէ՛ առանձին գրքերով եւ թէ Հիւսիսափայլ ամսագրով: Այդ անցքերի նկարագրութիւնը մտադիր ենք շուտ ժամանակում հրատարակել ընդարձակօրէն Ռուսաց լեզուով. իսկ այս տեղ բաւականանում ենք ասել, թէ այդպիսի եւ այդքան հանգամանքները իմանալով պէտք է փառք տանք Աստուծոյ եւ գոյ լինինք նորա վերնախնամ ճեսչութիւնից, երբոր տեսանում ենք թէ մին ամբողջ քաղաքի մէջ, ուր բնակուած են 2,450 հոգու չափ Լուսաւորչական Հայք, եւ ուր նազարեանցի գրուածները մի եղբորս նմանակներ են արծազանգը, միայն 17 մարդ եւ ո՛չ աւելի ընկան այսօր Լուստերի թակարդը: Պատիւ եւ պարծանք Աշտարխանաբնակ բազմաթիւ եւ մեր ճշմարիտ հայրենակիցներին, որ նոցանից միայն 17 մարդ եւ ո՛չ աւելի դրոշմեցին իւրեանց մինչեւ այսօր անյայտ անունները բաժանագրի վրայ. «Բայց եւ հերձուածք լինելոց են իձեզ, զի որք ընտիրքն իցեն իձեզ՝ երեւեցին» (Ա. Կորնթ. ժԱ, 19): Այժմ քաղաքի պրոտեստանտ Հայերը յայտնուեցան եւ որոշուեցան Լուսաւորչականներից. дурная работа не пошла. Ի՛նչպէս չուրախանանք այդ բանին, մանաւանդ որ նազարեանցի տուած կանոնով պէտք է ընդունենք, թէ այդ 17 մարդու եւ Աշտարխանի մնացած բազմամարդ Լուսաւորչական ժողովրդի մէջ ճշմարիտ եղբայրսիրութիւնը մնալու է միշտ անխախտ, որովհետեւ կրօնի փոփոխութեամբ մարդուս արիւնը, ստամոքսը եւ փորտիքը չեն

(1) Սաղաքեանց ազգատոհմից մինը՝ Կարապետ Թեղոսեան, մին քանի տարուց յետ կարողացաւ առանձին խնդրով բոյստուորին ստանալ Կառավարութիւնից՝ դուրս գալ իւր արգելաբանից եւ բնակուել միայն Մոսկով, ուր կայ մինչեւ այսօր հրաժարուած իւր մայրենի եկեղեցուց: Նշանուոր բան է որ այդ Կարապետ Սաղաքեանցը, իմանալով նազարեանցի գրուածների միտքը, պէտ է մին քանի Մոսկովաբնակ Հայերի մէջ, թէ 33 տարի առաջ նոքա (այսինքն՝ Սաղաքեանք եւ նոցա համախոհները) այդ էին ցանկանում: Ահա նազարեանցի ձայնակիցներից մինը:

(2) Այդ բոլորը տպագրուեցաւ նազարեանցի Կրօնքի վարդապետարանը, որ յետոյ Ա. Սինօղը հրամայեց յետ մղովել ամենայն տեղ:

(1) Տես անցած տարու մեր անպատասխան մնացած յօդուածը 23 եւ 25 համարներում:

փոփոխուում ամենեւին. ուրեմն այդ 17 մարդու կրօնական մտքերով զանազանուիլը Լուսաւորչական հասարակութիւնից՝ չէ՛ վնասելու նոցա մէջ եղած եղբայրսիրութեանը կամ ճշմարիտ հայրենասիրութեանը. դա նման է—նազարեանցի բերած օրինակով—երկու եղբոր մէջ ծագած մին կռուի. իսկ ամենայն կռիւ, ամենայն վէճ, այսինքն՝ մտքի եւ զգացմունքի տարածայնութիւն՝ եղբայրսիրութեան աղբիւրն է, միայն թէ արիւնք եւ ստամոքսը կամ փորոտիքը չկորուսանեն իւրեանց եւրոպական լուսի տակ քնած ազգայնութիւնը:

Վերջին երկու կամ երեք անգամ տարիներում նկատելով պրոտեստանտների 1820 թուականներին մեր Հայոց ազգի մէջ զանազան քաղաքներում շարունակաբար ցանած սերմերի պտուղները, կարծուկէինք թէ այն քաղաքներում բնակուած Հայերի եմէ ո՛չ կէս մասը, գոնեա քառորդը պէտք է վարակուած լինի լուտերական աղանդով: Աշտարխանի օրինակը ցոյց տուեց մեզ մեր կարծիքի եւ երկիւղի չափազանցութիւնը. у старша гласа великих, ինչպէս Ռուսը ասուկէ, կամ ինչպէս Հայը ասուկէ՝ Աջա վախեցած հր: 17 մարդ 2,450 հոգու մէջ պատկերացնում են լուսաւորչականների եւ պրոտեստանտների պրոպագանդական յարաբերութիւնը, իբրեւ 144 դէպ իմին. չնչի՛ն յարաբերութիւն, աննշան թիւ: Եթէ միւս քաղաքներում եւս (ուր տացէ Տէր ո՛չ մինը չլինի) համեմատական յարաբերութիւնը լինելու է նոյնը, փա՛ռք Աստուծոյ եւ դարձեա՛լ փառք, եմէ միայն դորանով վերջանալու է պրոտեստանտական որոգայթաբարութիւնը: Ո՞ր հասարակութեան, ո՞ր բազմութեան մէջ, ո՞ր երկրումը չկան վատ եւ դաւաճանող անձինք, ո՞ր ազգի մէջ չեն եղել Վասակներ, Մերուժաններ, Վեստ Սարգիսներ եւ Սաղաներ:

Վերջապէս դարձուցանում եմ խօսքս դէպ ի՞նչ, իմ պատուելի Աշտարխանաբնակ հազարաւոր քաղաքակիցներ, արժանայարգ եւ ճշմարիտ Լուսաւորչական հայ եղբայրներ: Ձեր մէջ բնակուած 17 մարդու լուտերախոյի արձագանգը Ձեր բազմամարդ հասարակութեան պատիւն է եւ փառքը: Դուք լիակատար իրաւամբ կարող էք պարծենալ թէ վերեւումը յիշած որոգայթներից յետ, Դուք մնացել էք անասան եւ անյողորդ մեր քրիստոսադիր, առաքելաբարոզ եւ հայրապետապահ դաւանութեան մէջ: Ինձ քաղցր է կրկնել Ձեր առաջեւ առաքելոյ խօսքը թէ «Բայց եւ հերձուածք լինելոց են իձեզ, զի որք ընտիրքն իցեն իձեզ՝ երեւեսցին» (Ա. Կորնթ. ԺԱ, 19): Այդ ընտիրքը Դուք էք՝ այդչափ որոգայթների մէջ անփոփոխ մնացած. «Եւ այս է յաղթութիւն, որ յաղթէ աշխարհի՛ հաւատքն մեր» (Յովհ. Ե, 4): Ձեզ յայտնի է մեր Լուսաւորչական եկեղեցու արժանաւորութիւնը: Դուք գնահատուկէք մեր ազգի Բարձրագոյն Հոգեւոր իշխանութեան բազմադարեան հրնութիւնը, որ սկսանում է Թադէոս Առաքելոյ եղեսիայում ձեռնադրած Ադդէ եպիսկոպոսից, եւ անընդհատ յաջորդութեամբ տեւում է մինչեւ այժմեան Սրբազնասուրբ Հայրապետը ՄԱՏԹԷՈՍ: Դուք ուսանում էք միշտ մեր եկեղեցու անստերիւր վարդապետութիւնը, եւ ուսանում էք այն մշտքով, ինչ մտքով Պողոս առաքեալը եւ նորա հետ ինքը մեր եկեղեցին հրամայում են ուսանել. «Իբ-

րեւ ընդ իմաստունս խօսիմ, ընտրեցէ՛ք ձեզն զոր ասեմս» (Ա. Կորնթ. Ժ, 15). «Ձամենայն ինչ փորձեցէ՛ք, զբարին ընկալարուք» (Ա. Թեսաղ. Ե, 21): Ձեզ քաջայայտ է որ այդ խօսքերով առաքեալը եւ մեր ազգային եկեղեցին կամենում են ասել, թէ նոքա աներկբայ համոզուած են իւրեանց ուսման անսուտ ճշմարտութեան մէջ, վասն որոյ եւ աներկիւղ առաջարկում են քննել իւրեանց վարդապետութիւնը, որ մեք ուսմամբ եւ դաստիարակութեամբ կարողանանք հաւատալ այն ճշմարտութիւններին՝ որոց հիմնողը Քրիստոս էր: Այս տեղից բացափայլում է Հաւաստի մեծութիւնը, որ սկսանում է այն տեղ՝ ուր որ վերջանում են մարդկային ուսումնագիտութիւն. «Ձի իմաստութիւն աշխարհիս այսորիկ յիմարութիւն է առաջի Աստուծոյ» (Ա. Կորնթ. Գ, 19). «Ո՞վ խորք մեծութեան եւ իմաստութեան եւ գիտութեան Աստուծոյ. որպէս զի առանց քննելոյ են դատաստանք նորա, եւ առանց զննելոյ ճանապարհք նորա: Ձի ո՞վ գիտաց զմիտս Տեառն, կամ ո՞վ խորհրդակից եղել նմա (Հռոմ. ԺԱ, 33-34). «Հաւատովք ճանաչել զնա, եւ զգորութիւն յարութեան նորա, եւ զհաղորդութիւն չարչարանաց նորա» (Փիլիպ. Գ, 10). «Եմէ ունիցիք հաւատքս քան զհատն մանանխոյ, ասասցիք լերինս այսմիկ, փոխեա՛ց աստի անդր՝ եւ փոխեսցի, եւ ոչինչ անհնարին լինիցի ձեզ» (Մատթ. ԺԷ, 19): Դուք գիտէք այդ բացայայտ խօսքերի իմաստը որ հեշտ հասկանում է եւ խոստովանում է ամենայն քրիստոնեայ, բաց ի պրոտեստանտը. «Ձի իմանկութենէ զգիրս սուրբս գիտէք, որք կարողք են իմաստուն առնել զձեզ ի փրկութիւն, իձեռն Հաւատոյն՝ որ ի Յիսուս Քրիստոս». (Բ. Տիմոթ. Գ, 15): Այդ ասացուածներում, որպէս եւ բոլոր Աւետարանի մէջ, Հաւաստը, ինչպէս յայտնի է Ձեզ, բարձրագոյն է դասած քան թէ մարդկային ուսումն եւ լուսաւորութիւն: Դորանից չէ՛ հետեւում ամենեւին, թէ մարդս պէտք չէ՛ ուսանի կամ դաստիարակուի. եւ անդրադարձաբար, որովհետեւ մարդուս հարկաւոր է անպատճառ միշտ եւ հանապազ ուսանել եւ լուսաւորուիլ, այդ բանից չէ՛ հետեւում նոյնպէս թէ մեր ուսումն եւ գիտութիւն նախադաս են համարուած Աւետարանի մէջ՝ քան թէ Հաւատը. այդ իսկ պատճառով մեզ պէտք է «Գննել զգիրս. իմանկութենէ զգիրս սուրբս գիտել, զամենայն ինչ քննել»: որ կարողանանք տեսանել եւ հասկանալ թէ բանը այդպէս չէ՛: Պրոտեստանտները, որ իւրեանց համարում են Աւետարանի հաստարմատ հիման վերայ վերանորոգուած, եւ ուրիշ քրիստոնէից կոչում են Աւեստրակի ուսումը ծոռոյ եւ անհետաւոր, ինքեանք են ծուռում անամօթ յանդգնութեամբ Աւետարանի ասացուածները, երբ միանգամ կամենում են. բառերը յայտնապէս փոխելով եւ այլ իմաստ տալով բանին. ամենայն ժամանակ լուսաւորութիւնը շինելով մին զմայլեցողիչ քող՝ իւրեանց խաբէութիւնը եւ իսկական նպատակը կարճատեսների աչքերից ծածկելու համար: Եւ եմէ մինը նոցա առաջն է գնում Աւետարանի անփոփոխելի բառերի յատուկ նշանակութիւնը, նոքա՛ խօսքով միայն Աւետարան պաշտպանողները, չկարողանալով տալ պատասխան, Աւետարանը թողնում են մին կողմը եւ գոռում են գոչում են միայն թէ այն մարդը լուսաւորու-

Թեան եւ ուսման հակառակ է եւ արգելիչ: Այդ չէ՞ նշանակում արդեօք Թէ պրոտեստանտների հասկացած լուսաւորութիւնը չկայ ամենեւին Աւետարանի մէջ, Թէ նոցա լուսաւորութիւնը մին այլ լուսաւորութիւն է՝ աւետարանական ճշմարիտ ուսման հակառակմարտ. վասն է՞ր են ապա նոքա կոչուում *Աւետարանական*. մարդ խաբէրու եւ իւրեանց կեշտը որսալու համար, եւ ոչինչ աւելի. որպէս նորումս խաբել են եւ որսացել են Ձեր մէջից 17 մարդ. «Ո՛չ է իմաստութիւնս այս իջեալ ի վերուստ, այլ երկրաւոր, շնչաւոր եւ դիւալական», ասում է Յակոբ Առաքեալը, այդպիսի լուսաւորութեան համար (Կաթող. Գ, 15):

Վերեւումը բերած Աւետարանի խօսքը, «եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ, ասասջի՞ք լերինս այսմիկ, փոխեա՛ց աստի անդր՝ եւ փոխեսցի», պրոտեստանտները այնպէս են հասկացնում Յաղաներին նազարեանցի բերանով, որպէս Թէ այս տեղ գրուած լինէր, «եթէ ունիցիք *ուսումն եւ յուսարորութիւն* քան զհատն մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ, փոխեա՛ց աստի անդր՝ եւ փոխեսցի»: Ո՞ր է մնում Աւետարանի բառը եւ Քրիստոսի միտքը՝ *Հարս*. մեր երկնաւոր Տէրը, իւր բերանով եւ բացայայտ բառերով, մին սար տեղափող առնելու զօրութիւնը ընծայում է *հարս ունեցողին*, իսկ նոքա՝ նազարեանցի խելքով եւ մին Թիւրքիւնսի Սերոբեանցի հասկացողութեամբ տամ են այն զօրութիւնը մին ուսած մարդու, (չիցէ՞ Թէ Թամարի կամ Արաբի լեզուներ իմացողի): Արդեօք ա՛յս է Աւետարանի բառը եւ նորա հետ կապած նշանակութիւնը՝ *Հարս*. արդեօք Քրիստոս չգիտէ՞ր *ուսումն* կամ *յուսարորութիւն* բառերը, որ այդ տեղ գործածէր փոխանակ *հարս* բառի, եթէ միայն պէտք լինէր, եթէ մարդկային ուսման եւ գիտութեան կամենար ընծայել այն զօրութիւնը, եւ եթէ մեք հասկանում ենք այդ ասացուածը այնպէս՝ որպէս Քրիստոսի միտքն է եղել, որպէս բառերի դիւրիմաց նշանակութիւնը ցոյց է տամ, այսինքն՝ ո՛չ Թէ մարդկային գիտութեան, այլ *Հարսի* է ընծայած մին սար տեղափող առնելու զօրութիւնը, այս տեղից կարելի՞ է արդեօք եզրակացուցանել՝ Թէ մեր լուսաւորութեան ընդդէմ ենք, եւ Թէ Քրիստոս իբր Թէ հրամայել է կուրօքէն հաւատալ, որպէս մեկնաբանում են մեր խօսքը կամաւ կուրացած մարդիկ:

Պրոտեստանտների աշակերտները մեր Հայոցս մէջ, նազար-նախանդա-Սաղայական ջոկըրը, կամ յիւրաւի չգիտեն Հաւատի եւ մարդկային գիտութեան զանազանութիւնը, եւ այդ պատճառով խառնում են մինը միւսի հետ, կամ բոլորովին *Հարս* ասած բանը վերացրել են, բարձել են իւրեանց սրտից, եւ այդ պատճառով կարծում են Թէ չկայ եւ պէտք չէ՞ լինի աշխարհումը մարդու համար *Հարս*՝ մարդկային գիտութիւնից անկախ:

Կարդալով Աւետարանը եւ առաքելոց գրուածները, եւ համեմատելով Հին եւ նոր Կտակարանների ուսման հետ այդ երկու դիպուածը, պէտք է ասենք Թէ պարոնները առաջին դիպուածում ցոյց են տամ իւրեանց տգիտութիւնը, անուսումնութիւնը եւ անլուսաւորութիւնը, եւ այդ պատճառով դոցա յատկապէս հարկաւոր էր ուսանել, քննել զգիրս, իմանկութենէ զգիրս սուրբս գիտել, որ կարողանային նախ զանազանել *Հարսը*

մարդկային գիտութիւնից, եւ ապա հասկանալ Հաւատի նախադաս լինելը Սուրբ Գրոց մէջ մեր գիտութեան առաջեւ: Երկրորդ դիպուածում բացերեւոցում են սաստիկ մոլորութիւն, որ չունենալով տեղի ո՛չ Հին եւ ո՛չ նոր Կտակարանների մէջ, ցոյց է տամ յայտնապէս, Թէ սոցա քարոզած լուսաւորութիւնը, իբրեւ հակառակմարտ Սուրբ Գրոց եւ Աւետարանական ճշմարիտ Վարդապետութեան, է *յսպիսին հարսութիւն*. եւ պէտք է կոչուի ո՛չ Թէ *աւետարանական*, այլ *երկրաւոր, շեշտոր*, եւ *դիւալական*: Կամ պէտք է համաձայնին պարոնները Թէ նոցա հասկացած լուսաւորութիւնը չկայ ամենեւին Սուրբ Գրքերի մէջ, կամ պէտք է խոստովանուին բացայայտ՝ Թէ չեն ընդունում ո՛չ մին Սուրբ Գիրք եւ ո՛չ իսկ Աւետարանը. երրորդ ինչ կամ միջին բան չկայ այդ տեղ:

Քրիստոս իւր սուրբ Աւետարանում, որպէս եւ առաքեալը իւրեանց հոգելից գրուածներում, հրամայում են մեզ *ուսանել, լինել զգիրս, նսնուցել եւ իմանալ զճշմարտութիւն*. համանգամայն պատուիրում են մեզ *հարսալ*, այնպէս որ Հաւատը ամենայն քայլափոխում բարձր է դրուած, քան Թէ մարդկային ուսումն եւ լուսաւորութիւն. այդ յայտնի է ամենայն մարդու՝ ով որ միանգամ կարդացել է մտադրութեամբ Աւետարանները եւ առաքելոց գրութիւնները ծայրէ ծայր: *Հարսալ* եւ *ուսանել* ըստ երեւութիւն հակառակ են միմեանց. *հարսալ* բառով սովորաբար հասկանում ենք ընդունել մին բան առանց քննութեան. իսկ *ուսանել* (հասկանալ, իմանալ) նշանակում է ընդունել որ եւ իցէ ճշմարտութիւն քննութեամբ: Այս մտքով պէտք էր ասէինք ուրեմն, Թէ Աւետարանի եւ Առաքելոց ասացուածների մէջ հակասառութիւն կայ. ո՛չ. ամենեւին ո՛չ: Հաւատը ամենայն ուսման եւ գիտութեան վախճանական նպատակն է, նոցա ճշմարտութիւնների հետեւանքը: Մարդս իւր ամենայն բազմատեսակ քննութեան եւ ուսման մէջ հաւատում է այն բանին, ինչ որ հիմնուած է ապացոյցների վերայ: Օրինակ առնունք Մաթեմատիքան, որ ամենայն իրաւամբ կոչուում է ճշմարտութիւնների Թագաւորութիւն: Այդ գիտութեան մէջ հաւատ է դառնում այն ճշմարտութիւնը, որ հաստատուում է անհերքելի ակներեւ ապացոյցներով: Մեր հաւատում ենք, զորօրինակ՝ Թէ երկու կէտի մէջ մի միայն ուղիղ գիծ կարելի է ձգել. եւ հաւատում ենք այն պատճառով՝ որ սովորել ենք, ուսել ենք դորա ապացոյցը՝ Թէ միւս ուղիղ գիծը նոյն երկու կէտի մէջ կամ պէտք էր միանար նորա հետ, կամ պէտք էր ընդմիջէր նորան. եւ վարժապետը այն պատճառով է ասում աշակերտին այդ ապացոյցը, որ նա հաւատայ՝ Թէ երկու կէտի մէջ չեն կարող լինել երկու ուղիղ գիծ. եթէ ո՛չ՝ չէ՞ր հաւատար նա այդ ճշմարտութեանը: Ուրեմն գիտութեան հետեւանքը լինում է միշտ հաւատ. եթէ ո՛չ, պէտք էր ասէինք, Թէ մեր քննածին, մեր իմացածին, ապացոյցներով ընդունածին չենք հաւատում:

Նոյն կերպով եւ մեր Փրկիչը, որ քարոզում էր աշխարհին ամենամեծ ճշմարտութիւն, կամենում էր որ իւր լսողները գործածեն իւրեանց դատողութիւնը, քննեն գրքերը՝ որ կարողանան *հարսալ* (չմոռանալ, նպատակը հաւատն էր որ մարդուս ամենայն գիտութիւնների մէջ ամրա-

ցուցիչ նեցուկն է) նորա քարոզած Յշմարտութեանը, պահանջումէր որ ժողովուրդը քննէ, հասկանայ թէ նորա երկնաւոր Առաքելութիւնը, նորա՝ երկնաւոր Հօրից ուղարկուած լինելը մարդկային ազգի փրկութեան համար, հիմնուած է մարգարէութիւնների վերայ եւ հաստատուած է նորա հրաշագործութիւններով. «Ձգործան՝ զորս ետ ցիս Հայր զի կատարեցից, նոքին իսկ գործքն զորս գործեմ՝ վկայեն վասն իմ եթէ Հայր առաքեաց զիս. եւ որ առաքեացն զիս Հայր՝ նա վկայեաց վասն իմ» (Յովհան. Ե, 36—37): Գարձեալ, «Ձի եթէ հաւատայիք դուք Մովսիսի, հաւատայիք արդեօք եւ ինձ, զի նա վասն իմ գրեաց» (Նոյն, 46): Այդ մտքով էր Քրիստոսի պատուէրը ուսանել զգիրս, ճանաչել զՅշմարտութիւն. մարգարէական գրուածները եւ նորա հրաշագործութիւնները, նորա բարոյական, խնդրատական եւ վճռական Յշգրիտ աստուածային խօսքերը, մանեմամիքապէս սովորելու եւ իմանալու ապացոյցներն էին այն անհերքելի Յշմարտութեանը, որ Աւետարանի մէջ կոչուուած Հարս իբրեւ նպատակ կրօնական ուսման եւ լուսաւորութեան. վասն որոյ եւ բարձր է դրուած Աւետարանի մէջ քան թէ ուսումն եւ գիտութիւն, որպէս բարձրագոյն է մանեմամիքայի մէջ ո՛ր եւ իցէ թուաբանական Յշմարտութիւն քան թէ նորա ապացոյցները, որ հարկաւոր են միայն դժուարիմանալի (վասն որոյ եւ ապացուցանելի) Յշմարտութիւնը հաւատալու համար: Այս մտքով էր պահանջուած մեր Տէրը քննել, հասկանալ, վերահասու լինել նորա խօսածին ու գործածին որ լսողները ո՛չ թէ կուրօքէն կամ բռնութեամբ, այլ ազատ կամքով, իւրեանց սեփական քննութեամբ, գրքերը կարդալով եւ ուսանելով, նորա գործերը մարգարէական նախագուշակութիւնների հետ համեմատելով՝ *հարսայիկ*, այսինքն համոզուէին թէ նա Աստուծոյ Յշմարիտ Արդին է: «Բեր զմատուենս քո, եւ արկ այսր եւ տե՛ս զձեռս իմ. եւ բե՛ր զձեռն քո եւ մխտա իկողս իմ. եւ մի՛ լինիր անհաւատ, այլ *հարսացեալ*» (Յովհ. Ի, 27), ասաց Յիսուս Թովմաս առաքելոյն՝ իմանալով նորա երկբայութիւնը իւր Յարութեան մասին. այսինքն՝ տե՛ս, քննիր իմ Յարութեան ապացոյցները, վերահասու եղիր բանին որ *հարսաւ* եւ չլինիս անհաւատ: Այսպէս, Ս. Աւետարանը բացայայտ բառերով ցոյց է տամ մեզ թէ մեր քննութեան, ուսման եւ լուսաւորութեան վախճանական նպատակը պէտք է լինի Հարսը:

Նոյն մտքով էին եւ առաքելոց ասացուածները, «Ձամենայն ինչ քննեցէ՛ք, զբարին ընկալարուք... Իբրեւ ընդ իմաստունս խօսիմ, ընտրեցէ՛ք ձեզն զոր ասեմ... Փորձեցէ՛ք, զինչ հասոյ է Տեառն» (Եփես. Ե, 10): «Մի՛ լինիք անմիաք, այլ իմացարուք զինչ կամք են Տեառն» (Նոյն, Գ, 17), եւ այլն: Վասն զի առաքեալք համոզուած գոյով իւրեանց քարոզած Յշմարտութեամբ, կամենումէին որ ամենայն մարդ եւս համոզուի, քննելով եւ հասկանալով այն անհերքելի ապացոյցները, որոց վերայ հիմնուած էր քրիստոնէական հաւատը. ցանկանումէին որ իւրաքանչիւր մարդ համոզուի այն Յշմարտութեան մէջ, որի մասին երկիւղ չկար որ մարդիկ քննէին, վերահասու լինէին. վասն զի այն յայտարարութեան հիմնողը ինքը Աստուած էր. մի-

այն թէ կամենային մարդիկ քննել եւ ուսանել. «Ձի ես ընկալայ իՏեառնէ, զոր եւ ձեզն աւանդեցի» (Ա. Կորնթ. ԺԱ, 23): «Մի՛թէ ըստ մարդկութեան խօսիցիմ զայս» (Նոյն, Թ, 8): Աւրեմն աւետարանական ուսման եւ լուսաւորութեան նպատակն է Հարսը, իբրեւ ծայրագոյն Յշմարտութիւն՝ անջրելի ապացոյցների վերայ ամրացած. եւ հետեւաբար Հարսը անչափելի զանազանութեամբ բարձրագոյն է քան թէ ամենայն մարդկային ուսումն եւ գիտութիւն, որոց նպատակը, ինչպէս վերեւումը ասացինք, նոյնօրինակ լինում է միշտ հաւատը (համոզումն, գիտակցութիւն, conviction, conscience, foi, yбвѣжденіе, co-знаніе, вѣра):

Քննենք այժմ թէ հնա՞ր է արդեօք ունենալ հաւատ առանց քննութեան, այսինքն ընդունել քրիստոսական կրօնի Յշմարտութիւնները առանց խուզախնդիր լինելու նորա ապացոյցներին: Ա՞վ կվճռէ մեզ համար այդ հարցմունքը, այդ դժուարընկալ առաջարկութիւնը մեր ժամանակում: Աւրեմն հարցանենք կամ ո՞ւմ հաւատանք այդ բանի լուծումն, եթէ ո՛չ՝ նոյն սուրբ Աւետարանին, որի մէջ գծագրուած է Աստուծոյ խօսքը: Եթէ սուրբ Աւետարանը պատասխանէ այդ խնդրոյն ստորաստի, պէտք է ասենք անտարակոյս թէ հնար է ունենալ հաւատ առանց քննութեան. եւ այն ժամանակ՝ իւրեանց *աւեստականիս* կոչողները թո՛ղ լուռին՝ պապանձուին իւրեանց երկրաւոր ուսմամբ եւ դիւական լուսաւորութեամբ, կամ բացայայտ ասեն թէ չեն ընդունում Աւետարանը, եւ մարդ չխաբեն:

Աւետարանի պատմական եւ խրատական ասացուածների, որպէս եւ առաքելոց Թղթերի մէջ տեսնուածնք Հարսի այդ միւս ձեւը, ուր առաւել մեծանում է նորա նշանակութիւնը. այդ տեղ Հաւատը դառնում է մին երկնային իմացականութիւն, մին աստուածապարգեւ զգացմունք, մին գերբնական շնորհք, Հոգւոյն սրբոյ ձիւք, ուր ամենայն քննութիւն լինում է Թովմասական երկբայութիւն, Թերահաւատութիւն — անհաւատութեան նշանակ: Քանաւացի կինը չէր սովորած եւ չէր քննած քրիստոսական կրօնի Յշմարտութեան ապացոյցները, բայց հասաւ ապացոյցների նպատակին — *հարսիկ*, եւ այդ պատճառով արժանացաւ լսել Քրիստոսի բերանից, «Կի՛ն դու, մեծ են հաւատք քո». այսինքն՝ դու լսած չես իմ քարոզութիւններս, դու կարդացած չես մարգարէութիւնները, համեմատած չես նոցա հետ իմ գործերս, բայց ունիս Հաւատ, եւ այն՝ *մեծ*, այսինքն՝ առանց ապացոյցների՝ ընդունած Յշմարտութիւն: Քրիստոս հարցանում է իւր աշակերտներին, «Իսկ դուք զո՞ ասէք զինչն՝ թէ իցեմ». Պետոսս պատասխանում է, «Ի՞նչ ես Քրիստոսն Արդի Աստուծոյ որ յաշխարհ գալոց էիր». եւ ի՞նչ է լսում Քրիստոսից. «Մարմին եւ արիւն քեզ ո՛չ յայտնեաց զայդ, այլ Հայր իմ որ յերկինս է». այսինքն՝ մարդկային դատողութեամբ կամ քննողութեամբ չիմացար դու այդ Յշմարտութիւնը, այլ աստուածային ազդեցութեամբ: Պողոս առաքեալը, որ ոչ միայն ուսած չէր յառաջագոյն քրիստոնէական Վարդապետութիւնը, այլեւ թշնամի էր եւ հալածիչ քրիստոնէութեան, արդեօք անձնական քննութեամբ կամ մարդկային ուսմամբ եւ լուսաւորութեամբ ընդունեց քրիստո-

նէութիւնը եւ եղաւ նորա հօր քարոզիչը: Ինքը առաքեալը լուծումէ այդ խնդիրը քանի քանի տեղում բացայայտ բառերով. «Քանզի եւ ոչ ես իմարդոյ առի եւ ոչ լուայ յուժեքէ, այլ իյայտնութենէն Յիսուսի Քրիստոսի» (Գաղատ. Ա, 12). «Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն սրբով» (Ս. Կորնթ. Բ, 10). «Եւ զոր խօսիմքս ո՛չ եմէ մարդկեղէն ուսմանք ճարտարմտութեամբ բանից, այլ վարդապետութեամբ Հոգւոյն» (Ս. Կորնթ. Բ, 13). «Ձի հաւատք ձեր մի՛ լիցին խնամարթեանք մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ» (Նոյն, 5). «Ձի խնամարթիւն աշխարհի՛ յիմարութիւն է առաջի Աստուծոյ» (Բ Կորնթ. Գ, 19): Արդեօք պրոտեստանտները ընդունո՞ւմ են Պօղոս առաքելոյն. — Ի՞նչպէս չէ: Պօղոսին ընդունում են, բայց Պօղոսի խօսքերը չեն ընդունում. եւ ի՞նչպէս ընդունեն խեղճերը մեր յառաջադարժ ժամանակում այդպիսի հնացած եւ մշակած խօսքերը, 1800 տարուց աւելի առաջ գրած բաներ. կամ թէ կընդունեն՝ մին քանի բառերը փոխելով, այլ իմն մեկնութիւններ տալով, ճշմարիտ իմաստը շրջելով, մեր յառաջախաղաց յրատար օրերի հոգուն հավեւանս: Այս տեղ նազարեանց կարող է ասել, Թէ Զերքեզեանցը հակառակ է լուսաւորութեան. նորա խօսքը մին եղեհակալութեան նման կարծողի մարդաների մէջ. յետոյ կշարադրուի մին թուղթ, մին քանի Սաղայ, մին քանի Թիւմիւնիսի ձեռք կղնեն. բանը կվճռահատուի, կգնայ: Ո՛ր մնացին Առաքելոց խօսքերը. ո՛ր մնաց Սեւտարանը եւ նորա ուղիղ մեկնութիւնը. ո՛ր մնացին նազարեանցի գրուածները եւ մեր ցուցմունքը. լուսաւորութիւն, լուսաւորութիւն. յառաջադարժ ժամանակ. բայց Թէ ի՞նչ է ճշմարիտ լուսաւորութիւնը, կամ Թէ Սաղայական լուսաւորութեամբ յառաջ է գնում ժամանակը՝ Թէ յետ, այդ հարկաւոր չէ՛ իմանալու:

Նարունակենք մեր միտքը. ի՞նչպէս պէտք է հասկանալ Քրիստոսի խօսքը՝ «երանի այնոցիկ, որոց ո՛չ իցէ տեսեալ, եւ հաւատասցեն» (Մատթ. Ի, 29). ո՛չ ապաքէն Թէ կարելի է հաւատալ առանց քննութեան, եւ ո՛չ Թէ Թովմասի նման հրաշափառ Յարութեան ապացոյցները խնդրելով, Քրիստոսի ձեռքերը եւ կողքը մի ըստ միոջէ զննելով: Ճշմարիտ քննութեամբ Աստուծանը հասկացողներին յայտնի է նոյնպէս, Թէ երբ Քրիստոսի երկնաւոր Առաքելութեան աստուածայնութիւնը հաստատուեցաւ շատերի սրտումը, այն ժամանակ մեր Տէրը կամենում էր արդէն որ նորա խօսքերին հաւատան առանց քննութեան. որովհետեւ ասաց, «Որ առաքեացն զիս՝ ճշմարիտ է, եւ ես զոր լուայ ինմանէ՛ զայն խօսիմ յաշխարհի». վասն զի ինչ որ նա խօսում էր, Աստուծոյ խօսք էր, եւ մարդիկ պէտք էր հաւատային նորան առանց երկբայութեան, ուրեմն եւ առանց քննութեան:

Վերեւումը բերած, եւ այլ շատ նոցա նման՝ Աստուծանի պատմական եւ խրատական ասացուածներէից, որպէս եւ առաքելոց վկայութիւններից երեւում է բացայայտ՝ Թէ Հարուստ բարձրագոյն է դասած նոցա մէջ, քան Թէ մարդկային ուսումն եւ գիտութիւն. նախ՝ իբրեւ նպատակ ամենայն ուսման եւ լուսաւորութեան (այսինքն՝ պէտք է ուսանել, հասկանալ, իմանալ այն ապացոյցները, որոց վրայ հիմնուած է Հարուստի

ճշմարտութիւնը, եւ սորան ասում ենք *ուսումնական հարուստ*, որպիսի է մեր ուսումը եւ հրահանգութիւնը կրօնական առարկաների մէջ. երկրորդ՝ իբրեւ ճշմարտութիւն, որ ստացուում է աստուածային զօրութեամբ եւ սուրբ Հոգւոյն շնորհօք. (Հաւատ երանական կամ Հաւատ ընտրելոց):

Այդ ճշմարիտ աւետարանական լուսաւորութեանց Սաղաները, նազարեանցի հետ կուրօքէն հաւատացած եւ սրտի մաքով հաւանած պրոտեստանտներին, շինել են իւրեանց համար այնպիսի մին լուսաւորութիւն, որ ընդդիմաբաժանուած եւ հեռացած է Աստուծանականից, որպէս Հիւսիսային բեւեռը Հարաւայնից. այնպիսի մին լուսաւորութիւն որ հրամայում է իւրաքանչիւր Սաղայի քննել կրօնը իւր սեփական խելքով, եւ այն՝ առանց ուսման եւ հրահանգութեան ապրող մարդկանց. եւ եմէ մին Սաղայ կամ մին Թիւմիւնիսի հասկանալու չլինի ո՛ր եւ իցէ բան կրօնի մէջ, այն բանը չնշել Աստուծանի մէջ, կամ փոփոխել, կամ այլապէս մեկնել եւ կամ չհաւատալ ամենեւին այն բանին, միայն Թէ եկեղեցու կամ Սրբազան Հարց մեկնութիւնները չընդունել: Այնպիսի մին լուսաւորութիւն, որի արժանաւորութիւնը եւ օգտակարութիւնը համարուում է ազգային բազմադարեան, քրիստոսադիր, առաքելաբարոզ եւ հայրապետապահ կրօնը, ըստ ըմաց ինքնավճռահատ քննութեան ենթարկել. մին Յանդէյեանցի չհասկացածը փոփոխել, մին Պիտանեանցի աւելորդ կարծեցածը՝ կրճատել, մին նազարեանցի չհաւանածը՝ *ոսփոյ* միջնէր գործի *րեգորմի ենթարկել*, մին Թիւմիւնիսի Սերոբեանցի չընդունածը՝ մերժել: «Եկեցէ ժամանակ (արդեօք ներկայ ժամանակս չէ՞) զի ողջմտութեան վարդապետութեանն ո՛չ անսայցեն, այլ ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս՝ ըստ մարմաջելոյ լսելաց իւրեանց» (Բ Տիմոթ. Գ, 3): Այնպիսի մին լուսաւորութիւն, որ մին կարգընկէց Լուսեր աղանդաւորի կրօնական ընդհանրին սիրահարուած, պէտք է ընդունի եւ նորա քարոզածը՝ Թէ «Գոռնիկ կանայք առաւել հաճոյ են Աստուծոյ՝ քան Թէ կուսանք, եւ Թէ կին սաղմնառեալ Թէեւ յապօրինաւոր անկողնոյ կարէ՛ պարծիլ»⁽¹⁾: Այնպիսի լուսաւորութիւն, որ կալիին աղանդաւորի բերանով հուշակում է, Թէ ամենայն մասնաւոր անձը ունի իրաւունք ընտրել այն կրօնը, որ երեւում է նորան լուսագոյն⁽²⁾, չմտածելով, Թէ այդ կանոնը արդարացնում է եւ Հրեաներին, որ ո՛չ միայն չընդունեցին Քրիստոսի վարդապետութիւնը, այլ եւ խաչեցին զնա, որովհետեւ իւրեանց կրօնը համարում էին լուսագոյն: Վերջապէս այնպիսի մին լուսաւորութիւն, որ իւր մոլար քըննութիւններով տակնուվեր է առնում սուրբ Աստուծանի հիմքերը, վասն զի առանց Հաւատի, որ Աստուծանի մէջ ունի առաջին տեղը, որպէս վերեւումը ապացուցինք, առանց այն Հաւատի՝ որին Քրիստոս ընծայեց մին սար տեղափոխ առնելու զօրութիւն, առանց ընդունելու եկեղեցու մեկնածը՝ որի հետ խոստացաւ Քրիստոս լինել մինչեւ իկատարած աշխարհի, եւ միայն անձնական քննութեան ապաւինելով, մին Յանդէյեանց,

(1) Տես, ճառադրի անցած տարու 24 համարումը մեր անպատասխան մնացած յօդուածը:
 (2) Տես նոյն յօդուածումը:

կամ մին Մեհնիկեանց, կամ նոցա նմաններից մինը ի՞նչպէս պէտք է ընդունեն հրաշափառ Մարդեղութեան խորհուրդը անարատ Կուսից, ի՞նչպէս պէտք է մեկնեն Գրիստոսի անապական Մունդը եւ հետեւաբար նորա Աստուածութիւնը: Այս բաները խօսուենք այս տեղ ո՛չ թէ Սաղաների համար — ի՞նչպէս կարող ենք բան հասկացնել նազարեանցի անկիրթ ամբօխին, եթէ չենք կարողացել մինչեւ այսօր հասկացնել ոչինչ՝ նոցա *ռատւնազեղ յարդապետի* — այլ մի միայն Ձեզ զգուշացուցանելու նպատակով՝ իմ հարազատ Հայ եղբայրներ:

Հեռի՛, հեռի՛ այդպիսի սանձակոտոր դիւական լուսաւորութիւնից, Լուսաւորչակա՛ն հայրենակիցներ: Հեռի՛ այնպիսի մարդկանցից, որոց Առաքեալը կոչումէ «Մարդք ապականեալք մըտօք՝ անպիտանք իհաւատս» (Բ Տիմոթ. Գ, 8). «Որք յամենայն ժամ ուսանին եւ երբէք իգիտութիւնն Տշմարտութեան ո՛չ հասանեն» (Նոյն, 7): Պահեցէ՛ք անփոփոխ ամենայն մասամբ մեր ազգային աստուածապարգեւ լուսաւորչականդ ամենամաքուր Հաւատը՝ նորա ներքին դաւանութեամբ եւ արտաքին ծէսերով, որպէս մինչեւ այժմ պահել էք Գուրք եւ Ձեր նախահարքը. «Պահեցէ՛ք զաւանդն՝ խոտորեալ խաղճոց եւ ինորածայն բանից եւ իհակառակութենէ եւ իմոլարանուն գիտութենէ: Ձոր ոմանց յանձն առեալ վրիպեցան իհաւատոց անտի» (Ա Տիմոթ. Զ, 20—21): Սիրեցէ՛ք Տշմարիտ ուսումն եւ Տշմարիտ լուսաւորութիւն. պայծառացուցէ՛ք Ձեր միտքը կրօնի դաստիարակութեամբ. քննեցէ՛ք նա եւս այն ապացոյցները, որոց վրայ հիմնուումէ մեր կրօնի Տշմարտութիւնը, բայց ամենայն ժամանակ եկեղեցու մեկնածի ձեռամբաճութեան ներքոյ. ասումենք եկեղեցու, որովցետեւ նորա հեա խոստացաւ լինել մեր Տէրը մինչեւ իկատարած աշխարհի. որ չխոտորուէք Տշմարիտ Աւետարանական լուսաւորութիւնից, եւ մոլորական խարդախամիտ մեկնութիւնները՝ որ կոչումեն իւրեանց նոյնպէս *աւեստականական*, չհամարէք ուսումն եւ լուսաւորութիւն: «Սի՛րելիք, մի ամենայն հոգւոյ հաւատայք, այլ ընտրեցէ՛ք զհոգիսն՝ եթէ յԱստուծոյ իցեն. զի բազում սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ» (Ա Յովհ. Գ, 1): Ազգային Տշմարիտ լուսաւորութեան առաջին եւ գլխաւոր պայմանն է ազգային կրօնի ամենայն մասամբ անփոփոխ պահպանութիւնը: Օրինակ թո՛ղ լինին Ձեզ Գաղղիացիք, որ իւրեանց լատինական կրօնը բոլոր եկեղեցական ծէսերով եւ արարողութիւններով պահպանութեն անփոփոխ, եւ այդ կրօնապահութիւնը չէ՛ արգելում նոցա լինել առաջին լուսաւոր ազգ երոպայում:

Ազգային կրօնը, ներքինը եւ արտաքինը, այսինքրն դաւանութիւնը եւ ծէսերը՝ իբրեւ նորա հոգին եւ մարմինը, ազգի ամբողջութեան եւ միաւորութեան երեւելի նշանակն է. նորա պահպանութիւնը հարկաւոր է առաւելապէս մեր ազգին, որի անդամները միմեանցից բաժանուած, զանազան աշխարհի եւ տէրութեան մէջ բնակուած,

իւրեանց ազգային սովորութիւնները կորուսած, ունին դեռ եւս ազգայնութեան մի եւ մի միայն ընդհանուր յատկանիշ՝ իւրեանց Հաւատք: Պահեցէ՛ք, պահպանեցէ՛ք մեր ազգի լուսի նման այդ մեր ազգային միաւորութեան, եղբայրսիրութեան եւ միաբանութեան եզական կապը, այդ մեր սրտի եւ մտքի համաձայնութիւնը, որի կեդրոնը ինքը Միածինը՝ մեր բազմաչարչար Հայրապետի, սուրբ Գրիգոր Լուսաւորչի ձեռամբ դրեց Արարատեան աշխարհում, Վաղարշապատի մօտ Միածնաէջ տաճարումը:

Պահեցէ՛ք միշտ անմուսաց Ձեր մտքումը մեր աստուածապարգեւ Սրբազնութեամբ Հայրապետի առաքելաբերան խրատաբանութիւնը, որ այսօր Գրիգոր Լուսաւորչի ամոռում նստած, ձայն է տամ մեզ ընդհանրական կոնդակով. «Ձուրք եւ զուղղափառ դաւանութիւնն հաւատոց Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ մաքուր «եւ անարատ պահեսչիք յամենայն արատոյ պէս» պէս աղանդոց, նորածեւութեանց, մոլար մեկնութեանց եւ թիւր վարդապետութեանց, պահելով ըստ ամենայնի հաստատուն եւ ամբողջ «զամենայն հոգեւոր կարգս եւ զեկեղեցական «աւանդութիւնս եւ զաստուածափառոյ կանոնս, «զաւանդեալսն մեզ իսրբազան առաքելոց, եւ հետեւաբար իսրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մեր» մէ, եւ ինորուն հետեւողաց առաքելաշնորհ սրբազան նախնեաց մերոց . . . որպէս զի սահմանադրութիւն սրբազան կարգաց եւ արարողութեանց՝ աւանդելոց մեզ իսրբոց Հարց՝ միշտ «հաստատուն մնալով իմիջի ձերում, ընկալիք «զվարձս». եւ այլն:

Աստուծոյ օգնականութեամբ ազգային կրօնի պաշտպանութեան գործը կարողացանք հասուցանել այն ցանկացած նպատակին, որ լուստերամիտ ընդդիմախօսները մեր ազգի մէջ՝ անպատասխան մնալով մեր ցուցմանց առաջեւ, բացայայտ ներգործեն, գործով իրաւացնեն մեր գերուածների Տշմարտութիւնը. առանց խօսելու եւ արդարանալու՝ հեռանան մեզանից ու չսմորեն ժողովրդեան մնացորդը. եւ ահա որովք բաժանուումէ ցորենից. *Sapienti sat!* հասկացողին բաւական է այսչափ: Թող դուրս գնան մին քանի եւս սոցա նմանները (եթէ կան), Թող յայտնուին, եւ իրապէս կատարեն պրոտեստանտական կանոնը՝ թէ «Ամենայն մարդ ունի իրաւունք ընտրել այն կրօնը, որ երեւումէ նորան լաւագոյն». եւ այդ իւրեանց սեփական կանոնի զօրութեամբ տան եւ մեզ իրաւունք հաստատուն եւ անյողդողդ մնալու մեր սուրբ եւ անարատ Լուսաւորչական կրօնում: Այսուհետեւ Ձեզ փառք եւ պարծանք, հարազատ Լուսաւորչական Հայ եղբայրներ. եւ ինձ, Ձեր յետին՝ բայց եւ սրտեռանդն ծառայիս՝ ուրախութիւն եւ մխիթարութիւն, զի «Ձբարուք պատերազմն պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի». (Բ Տիմոթ. Գ, 7):

ՅՈՒՍԷՓ ԶԵՐԲԵՋԵԱՆՅ,